

Հայ գրականություն, Պատմվածք, Արձակ

16+

Մկրտիչ Արմեն

Մաշված ոտնաման

1

Ի՞նչ փչեց Կարապետ աղայի խելքին այն տարի՝ ոչ ոք չգիտե: Միայն թե, այս անգամ, փոխանակ ուրիշին ուղարկելու, նա ինքն անձամբ վեր կացավ գնաց Ռուսաստան՝ իր կոշկեղենի խանութի համար ապրանք բերելու: Այդ մասին արևկող պատի տակ անում են մի քանի ենթադրություններ: Մեկն ասում է, որ նա որոշել էր վերջ ի վերջ մի անգամ գոնե տեսնել աշխարհը Հայաստանից այն կողմ, մանավանդ որ, բոլբոլները տիրել էին Ռուսաստանի մեծ մասին և կարծիք կար, որ աշխարհը շուտով պիտի ջնջվեր աշխարհի երեսից: Մյուսն ասում էր, որ Կարապետ աղան քաղաքացիական կռիվների խառն տարիներին իր գործակատարներից ոչ ոքի փող չէր կարող վստահել: Իսկ մի երրորդը պնդում էր, թե նա կոշկեղենի համար չէր գնացել, այլ ուրիշ, ավելի մութ նպատակներով: Իսկ ի՞նչ մութ նպատակներ՝ այդ ինքն էլ չէր կարող ասել:

Ինչու: Փաստն այն է, որ Կարապետ աղան, այդ խառը ժամանակին նստեց գնացք և մեկնեց դեպի Մոսկվա: Մի ամպոտ օր էր, աշուն: Երբ գնացքը շարժվեց, Կարապետ աղան բնագոյաբար ձեռքը տարավ դեպի աճուկները, — գնացքի շարժումներից չբացվի՞ այնտեղ կարված գաղտնի տոպրակը և չթափվե՞ն թղթադրամները. . . Համենայն դեպս աշնանային մռայլ օրն ամենաուրախ մարդուն անգամ կդարձներ հոռետես:

Գնացքը սլանում էր: Յուրաքանչյուր բռնեց կրճատվում էր այն տարածությունը, որ կար Կարապետ աղայի և կոշիկների միջև: Հետո հետո ավելի և ավելի էին մոտենում դրանք՝ այդ նվիրական կոշիկները, և Կարապետ աղայի աճուկները հուզվում էին վճարելու և գնելու ցանկությունից: Այո, նա կքանդի իր շավարի կոճակները, կհանի այնտեղից ամբողջ դրամը և աղայավայել ձևով կվճարի: Վճարելիս նա կգիտենա, որ յուրաքանչյուր զույգ կոշիկի մեջ պահված՝ իրեն է սպասում մի նոր, ավելի մեծ թղթադրամ: Երբ հասնի Հայաստան, նա իր ձեռքը կկոխի ոտնամանների մեջ և կսկսի հավաքել այնտեղից փողը, հավաքել...

Բոլոր կայարաններում վագոն էին բարձրանում նորանոր մարդիկ՝ իջնողների փոխարեն: Կարապետ աղան նրանցից ոչ մեկի երեսին չէր նայում, նա զբաղված էր նրանց ոտներով: Զսան տարվա կոշկավաճառի հմտությամբ նա մարդկանց ճանաչում էր նրանց ոտնամաններով: Նա գիտեր, որ մի անգամ արդեն հագնված կոշիկն ստանում է իր տիրոջ բնավորությունը: Հագնված կոշիկը կարծես կենդանանում է: Ծամռվելով և հարմարվելով ոտքին, նա իր մեջ արտացոլում է իր տիրոջը: Եթե Կարապետ աղային ցույց տան մի զույգ մաշված կոշիկներ, նա հեշտությամբ կպատմի դրանց տիրոջ ամբողջ կենսագրությունը: Մագուլից մաշված կաշին, մագուլից ուռած փուչիկը, մագուլից ծակված անցքը, մագուլի տեղում զգված կարկատանը, — մի՞թե դրանք տարբեր բաներ չեն, որոնցից ամեն մեկը մի ամբողջ տեղեկատու գիրք է կոշիկի տիրոջ վերաբերյալ: Էլ չխոսենք այն մասին, որ մագուլից զատ գոյություն ունեն՝ քրտինք, կոշկաներկ՝ զանազան տեսակի, կարկատաններ՝ զանազան ձևի, կոշկակապեր՝ զանազան դիմացկունությամբ և այլն: Կան ճեղքված կոշիկներ, կան՝ որոնց տակն է մաշվել, կան՝ որոնց երեսը... Ոտների և ոտնամանների մի ամբողջ էնցիկլոպեդիա կարող էր կազմել Կարապետ աղան: Բայց այժմ, վագոն մտնողի ոտներին նայելիս, նրա միտքն ուրիշ տեղ էր՝ դեպի հեռու Հայաստանը, որտեղ բազմաթիվ ոտներ սպասում էին իրենց ինսամատարին: Կվերադառնա նա, կոշիկները թակարդների պես կշարի իր մագազինի ցուցափեղկերում, և հաճախորդները կգան զույգ ոտով կընկնեն դրանց մեջ...

Հանկարծ գնացքը կանգ առավ դատարկ տեղում: Կոշիկները դադարեցին մոտենալ: Ինչո՞ւ: Ի՞նչ պատահեց: Ծամփորդներից շատերը թռան ներքև: Ծոզեմեքենայի մոտ հավաքվել էին մի քանի ձիավոր զինվորներ և ինչ-որ բան էին ասում մեքենավարին: Զիչ հետո, շոգեմեքենան սուլեց, և գնացքը նորից շարժվեց, բայց դեպի ետ: Կոշիկներն սկսեցին հեռանալ Կարապետ աղայից:

Այո՞: Առաջ գնալ անկարելի էր: Դիմացն արդեն բոլբոլներն էին, նրանք, որոնց մասին այնքան շատ էր լսել Կարապետ աղան Հայաստանում: Եվ հիմա ի՞նչ, վերադառնալ դատարկածեռն, առանց կոշիկների՞...

— Ո՞ւր ենք գնում, պարոն կոնդուկտոր:

— Ետ:

— Այսինքն՝ ո՞ւր:

— Ով ուր որ ուզենա:

— Ո՞րն է լինելու առաջին քաղաքը:

— Որը որ քիչ առաջ վերջինն էր:

— Անունը, պարոն կոնդուկտոր...

Կոնդուկտորը տվեց քաղաքի անունը: Կարապետ աղան զարմացած նայեց շուրջը և այդ թույլին ճանապարհորդներից մեկը, կոնդուկտորից ավելի սիրալիր, սկսեց բացատրել: Դիմացը գավառական քաղաք է՝ մեկը իր նման հարյուրավորներից: Իսկ մեծ քաղաքի կհասնենք վաղը, եթե, իհարկե, շարունակենք գնալ...

Կարապետ աղայի հոգում սկսվեց բուռն մենամարտ: Այնտեղ կռվում էին վաճառականն ու քաղքենին: Մեկնում էր՝ իջիր հենց այս քաղաքում, ով ոտների հովանավոր, իջիր և գկիր ինչ որ հնարավոր է գնել: Որքան ավելի առաջ գնաս դեպի ետ՝ այնքան ավելի պիտի թանկանան ոտնամանները: Ուզո՞ւմ ես արոյոք, որ երբ Հայաստանում ականջիդ մոտ բռնած ցնցես կոշիկը, ռուբլիանոցների խշխշոցի փոխարեն դրա մեջ ողորմելիորեն ճնգճնգա մի շահանոցը:

Իսկ քաղքենին վախեցած փսփսում էր՝ շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ, փախիր, գնա, ազատվիր, Կարապետ աղա: Շտապիր, թե չէ նրանք կհասնեն ետևիցդ: Եթե չսպանեն էլ քեզ, այնուամենայնիվ, բաց կանեն ոտներդ, կխլեն քեզանից քո երազների առարկան՝ փողը: Ավելի լավ չէ՞ մեռնել, քան թե վերադառնալ դատարկ տոպրակով և առանց կոշիկների...

Մինչև երեկո մտածեց Կարապետ աղան: Մինչև երեկո նրա մտքերը մտան կոշիկների մեջ ու դուրս եկան՝ պահանջկոտ հաճախորդի ոտքի պես, որին հարկավոր է այնպիսի կոշիկ, որը ոչ շատ լայն լինի, ոչ շատ նեղ, ոչ շատ բարակ կաշի ունենա, ոչ շատ հաստ, ոչ շատ թանկ լինի, ոչ շատ էժան... Մինչև երեկո նա չափեց չափչփեց և չհավանեց ոչ մեկը: Եվ նույնիսկ այն թույլին, երբ գնացքը կանգնեց փոքրիկ քաղաքում, նա դեռ չէր հանել իր որոշումը: Ահա կխփի գանգը, և նորից կսուլի շոգեմեքենան: Ի՞նչ անել՝ գնա՞լ, մնա՞լ... Ի՞նչ անել ախր... Մտածելու ժամանակ չկա...

Կես ժամ հետո Կարապետ աղան, իր մտքերից տարակուսած գլուխը վեր բարձրացրեց: Վազոնում ոչ ոք չկար: Նա սարսափած ցատկեց տեղից և թռավ դուրս: Փոքրիկ կայարանը լցված էր զինվորներով, բազմաթիվ զինվորներով, որոնց միջև քաղաքացիական հագուստ կրողները երևում էին հատուկներ: Կարապետ աղան անցավ գնացքի ամբողջ երկայնքով, բայց բոլոր վազոնները դատարկ էին, և նույնիսկ շոգեմեքենայի վրա ոչ ոք չկար... Նա պատրաստ էր գծվել ապշությունից, եթե հանկարծ հեռվում, լուսավոր փարոսի նման չերևար ծանոթ կոնդուկտորի ճաղատ գլուխը: Կարապետ աղան նետվեց դեպի նա.

— Ինչո՞ւ չենք գնում...

— Ո՞ւր:

— Առաջ:

— Ո՞րն է առաջը:

— Այս կողմ: Կամ այն կողմ...

— Որ կողմն էլ գնանք՝ օղակ է:

Կարապետ աղան թուլացած նստեց: Առաջին անգամ որչ ճանապարհորդության ընթացքում նա մոռացավ նույնիսկ իր աճուկներն ստուգելը:

Ինչո՞ւ համար էին այդքան շատ զինվորներ հավաքվել քաղաքում: Ինչո՞ւ համար էին գաղթում հարուստները: Ինչո՞ւ համար էին ձերբակալում բանվորներին: Կարապետ աղան ի՞նչ իմանար: Նա իր կյանքում նման խնդիրներով չէր հետաքրքրվել: Իսկ այժմ, նա միայն մի բան գիտեր.—

աշխարհին իրար է խառնվել: Նա այդ սպառնիչ պատասխանն էր տալիս բոլոր հարցերին, որոնք ծնունդ էին առնում իր գլխի կտոր կոշկավաճառանոցում: Իսկ ինչո՞ւ է աշխարհին իրար խառնվել... Նա տալիս էր նաև դրա պատասխանը: Պատճառն այն է, որ չունևորներն ուզում են ունևորների ողջ ունեցածը խլել, իսկ ունևորները թույլ չեն տալիս այդ:

Այսքանով վերջանում էին Կարապետ աղայի գիտելիքներն աշխարհի անցուդարձի մասին: Այժմ նույնպես, իջնելով այդ փոքրիկ քաղաքը և տեսնելով մարդկանց տենդոտ նախապատրաստությունը, նա մի ավելորդ անգամ ապացուցված էր տեսնում իր այն կարծիքը, որ աշխարհին իրար է խառնվել:

Աճուկների արանքում զգալով դրամի ծանրությունը, Կարապետ աղան գնաց հյուրանոց: Միայն մի ազատ սենյակ կար, և նա անմիջապես տեղավորվեց այնտեղ: Հյուրանոցը միհարկանի փոքրիկ շենք էր, որն իր ետևում ուներ շատ բարձր պատերով և հսկայական մեծությամբ մի բոլորովին դատարկ բակ: Այնտեղ չկար ոչ մի ծառ, ոչ մի թուփ: Բակը նման էր Մոսկվայից ստացվող կոշկեղենի դատարկ արկղի: Լուսամուտից տեսնելով այդ բակը, նա ունեցավ մենակության ծանր զգացում: Վարագույրն իջեցրեց ներքև, որպեսզի աչքին չերևար այդ անիմաստ, ամայի, բարձր պատերով բանտարկված տարածությունը: Նա նույնիսկ խնդրեց հյուրանոցի տիրոջից՝ փոխել իր սենյակը մի ուրիշ սենյակի հետ, որի լուսամուտները նայեին փողոցին: Բայց բոլոր սենյակներն զբաղված էին նույն անխուսափելի զինվորականներով, որոնք աշխարհը խառնել էին իրար:

Լվացվելուց և արտաքննոցում երկար մնալուց հետո (նա տնտղում էր աճուկների արանքում, վարտիքի վրա կարված տոպրակը), Կարապետ աղան դուրս ելավ կոշիկ փնտրելու: Փակ էին համարյա բոլոր խանութները: Մոտենալով դրանցից մեկի դռանը, Կարապետ աղան նայեց ներս: Խանութը դատարկ էր ինչպես հյուրանոցի բակը: Կարապետ աղան հասկացավ: Տերերը փախել են... Հասկացավ, և նրա մարմնով կարծես լվեր անցան:

Սակայն կոշիկ էր հարկավոր: Քսան տարվա կոշկավաճառը Կարապետ աղայի մեջ՝ հանգիստ չէր տալիս նրան: Եվ այդ ներքին ձայնին հիւս, գնում էր Կարապետ աղան փողոցներով, փնտրելով ցուցանակների վրա կոշիկի գործարանների ֆիլիալների անուններ... Սակայն չկային բաղձալի ցուցանակները, և Կարապետ աղան մոտ էր հուսահատության: Բայց միշտ բախտը ժպտացել էր նրան, թեև զուսպ, բայց հաճախակի ժպտոներով: Այս անգամ նույնպես, նա օգնության հասավ:

Տեսավ Կարապետ աղան, թե ինչպես իր աչքի առաջ փայլատակեց խոշոր տառերով գրված թիթեղը.— «Մագազինը փակելու պատճառով թատրոնական ռեկվիզիտի և այլ իրերի մեծաքանակ և էժանագին վաճառք»:

Նկատեց Կարապետ աղան, թե ինչպես մագազինի տիրոջ աչքերում բորբոքվում էր շուտ վաճառելու և փախչելու ցանկությունը: Սարսափեց Կարապետ աղան: Նրանից ավելի խելոց, ավելի հարուստ վաճառականները ծախում են, ծախծխում իրենց ունեցածը, շտապում են փախչել: Իսկ ի՞նչ է անում նա ինքը... Պատրաստվում է կոշիկներ գնելու... Ինչո՞ւ... Ի՞նչ հիմարություն...

Սակայն նրա հոգու խորքում թաքնված մանր չարչին վեր բարձրացավ իր ամբողջ կարճիկ հասակով.— մոտեցիր, Կարապետ աղա, գոնե հարցրու ապրանքի գինը...

Կարապետ աղան մտավ մագազին, հարցրեց գները և ապշեց աներևակայելի էժանությունից: Նա գնեց թատրոնական ռեկվիզիտին պատկանող բոլոր կոշիկները, ձեռքն շտապ տարավ դեպի շավարը և փրթ, փրթ, իրար ետևից քանդեց կոճակները: Մագազինի տերը նույնիսկ չհաշվեց փողը: Հավաքեց բոլոր կոշիկները, լցրեց չորս պարկերի մեջ և տվեց Կարապետ աղային: Ինչպիսի՞ ոտնամաններ կային այնտեղ... Տղամարդկանց, կանացի, երկարաճիտ, բաց երեսով, հազար ու մի ձևի ու գույնի... Կարապետ աղան մշակ կանչեց, և բեռն անմիջապես փոխադրեց հյուրանոց:

Այժմ պետք էր մտածել վերադառնալու մասին: Նստել գնացք, իր չորս կողմում շարել չորս պարկերը, բազմել դրանց միջև՝ լայն ժպտոն երեսին, և սլանալ դեպի իր հայրենիքի սիրելի գնորդները...

Հյուրանոցում Կարապետ աղան հաշվեց կոշիկները, տնտղեց դրանց ներբանները, ձիգ տվեց երեսների կաշին ու գոհ մնաց: Հետո նորից խնամքով լցրեց իրենց տեղը և սենյակից ելավ դուրս՝ դուռը խնամքով փակելով: Հարկավոր էր տեղեկանալ՝ երբ է մեկնելու գնացքը...

Քաղաքն անսովոր հուզմունքի մեջ էր: Ամենուր զինվորներ էին: Փոքրիկ քաղաքը կենդանացել էր զինվորական անթիվ ֆուրգոնների ու թնդանոթների անիվների գռգռոցից, հոգևած քայլերգներից ու հրահանգի բառերից, բնակիչների ահաբեկ շշուկներից:

Կարապետ աղան քայլերն արագացրեց: Որքան մոտենում էր կայարանին, այնքան նրա սիրտը խփում էր անհամբերությունից, ինչպես դախլում մենակ մնացած շահանց, որն ընկերներ էր պահանջում մենակությունից ազատվելու համար:

Կայարանում կարծես կայծակը խփեց Կարապետ աղային: Մեկնելու պատրաստ կանգնել էր գնացքը: Դա միակ գնացքն էր, որ դուրս էր գալու:

Միակ գնացքը... Դժվար էր պատկերացնել, թե ինչ խուճապ կարող էր տիրել կայարանում: Թվում էր, թե վագոնները պիտի պայթեին իրենց պարունակությունից: Մարդիկ ծեփ կպել էին նաև վագոնների կտուրներին, կպել էին վագոնների պատերին, ինչպես մեղրաթղթի վրա բռնված ճանճեր: Ուվքե՞ր էին, ո՞ւր էին գնում, ինչո՞ւ... Կարապետ աղան ահով նկատեց, որ բոլորն էլ իր նման մարդիկ են, իր դիրքի մարդիկ՝ իրենց ընտանիքներով և ունեցած-չունեցածով:

Մի րոպե Կարապետ աղան հասավ խելագարության դռներին և փոշմանած ետ դարձավ: Մի րոպե նա որոշեց քաշել, ոտնատակ նետել մի քանիսին վագոնի աստիճաններից և նրանց փոխարեն ինքը նստել ու գնալ... Բայց այնտեղից, հյուրանոցից, հաճելի բեռը սիրած կնոջ նման կախվեց Կարապետ աղայի վզից և նրան թույլ չտվեց ի կատար ածելու իր մտածածը: Եվ մնաց Կարապետ աղան իր տեղում մեխված:

Գնացքը շարժվեց... Ի՞նչ կարող էր անել Կարապետ աղան, եթե ոչ այլայլված վերադառնալ հյուրանոց և պինդ փակել դուռն ու լուսամուտը: Այժմ նա գիտեր, որ կատարվում էր մի մեծ ու սոսկալի բան: Ինչո՞ւ ինքն էլ չփախավ՝ թքելով կոշիկների վրա...

Սակայն այդ մտքերը երկար չտևեցին, և շուտով Կարապետ աղան քնեց սարսափից...

2

Արթնացավ Կարապետ աղան և ըստ իր հին սովորության գնաց արտաքնոց: Հյուրանոցի միջանցքում ոչ ոք չկար: Զնկոտ աչքերը ճմռելով, նա մտավ «տղամարդկանց» դռնով: Սկսեց մտածել: Սպասիր, ինչպե՞ս թե միջանցքում ոչ ոք չկար... Սպասիր, հարևան սենյակից չի՞ լսվում գրամեքենայի չխկչխկոցը և թելադրողի ձայնը: Սպասիր, չե՞ որ ամեն օր, այս ժամին...

Եվ Կարապետ աղան դուրս թռավ միջանցք: Հատակի վրա թափթփված էին թղթեր և դռներից մեկը կիսաբաց էր...

Վատ նախագագացումը համարձակություն տվեց Կարապետ աղային: Նա ետ հրեց դուռը և նայեց ներս: Ոչ ոք չկար: Նա բաց արեց երկրորդ դուռը: Նորից ոչ ոք: Այդպես բացուխուխի անելով բոլոր դռները, նա դողդողացող ոտքերն ուղղեց դեպի բուժետոի սենյակը: Ի՞նչ է պատահել: Գուցե հյուրանոցատերը կբացատրի: Այդ խոր հավատով նա մտավ ներս... Բայց բուժետոում նույնպես ոչ ոք չկար... Ամեն ինչ իր տեղումն էր, բայց տերը չկար... Փախել էր: Թողել էր ունեցած-չունեցածն ու փախել...

Չարհուրեց Կարապետ աղան: Հազիվ հագնվելով, նա իրեն նետեց փողոց: Ի՞նչ է պատահել... Ի՞նչ է պատահել... Ի՞նչ է պատահել վերջապես...

— Ոչինչ,— պատասխանում էին նրան անցորդները:— Մերոնք գալիս են: Սրանք գիշերով փախել են: Մեր պիկետները մի մասին բռնել են, բայց մյուսներին հաջողվել է ծլկվել: Քաղաքում կազմված է նոր իշխանություն: Մերոնցից...

Այլևս ոչինչ չլսեց Կարապետ աղան: Նա հազիվ իրեն գցեց հյուրանոց և պինդ փակվեց այնտեղ:

Սեփականատիրոջ մոլուցքով բռնված, նա սարսափած նայեց կոշիկներին: Ի՞նչ անել... Թողնել, որ գան բռնկիկները և հագնե՞ն դրանք... Ոչ, Կարապետ աղան այդպիսի բան թույլ չի տա: Նա կգործածի, կմաշի բոլոր կոշիկները՝ որքան որ թույլ տա իր տրամադրության տակ եղած ժամանակը... . .

Եվ նա սկսեց մաշել:

Իր օրվա մեծագույն մասը, վաղ առավոտից մինչև ուշ երեկո, նա անց էր կացնում հսկայական քարտ բակում ետ ու առաջ շրջելով՝ թե «մարտողության» համար և թե կոշիկները մաշելու: Ժամը մեկ փոխելով ոտնամանները, նա քայլում էր և քայլում:

Նա հազնում էր երկարաճիտ սապոգներ, որոնք կարող էին զարդարել հերթապահության կանգնած ոստիկանների ոտները: Հագնում էր լեզգինկա պարողի ծուղիներ՝ նուրբ երեսներով ու փափուկ տակերով: Հագնում էր կինտոյական չեքմաներ, որոնք միանգամից փոխում էին նրա քայլերի բնույթը: Հագնում էր տուֆլիներ, որոնցով դուքսերն էին ներկայանում անգլիական թագավորին՝ 18-րդ դարում: Դրանից անմիջապես հետո նա ոտքերն էր անցկացնում արևելյան քոշեր, որ կրում էին Հարուն ալ-Ռաշիդի ժամանակի բաղդադցիները: Ժամանակի և տարածության վրայով մի ահագին թռիչք կատարելով, Կարապետ աղան հազնում էր ժամանակակից բատինկաներ, որոնք կազմում էին ճակատամարտերում կռվող զինվորների հանդերձանքի մի մասը: Բավականին մաշելով դրանք, նա այժմ ոտներն էր անցկացնում Դրիմում հանգստանալու եկած ամառանոցավորի սանդալներ: Հագնում էր բուցիներ, ինչպես խաղացողները՝ ֆուտբոլի ժամանակ: Այնուհետև նա պարսիկ խաների նման հազնում էր տնային փափուկ կյանքի սիմվոլ մյասերը՝ դրանց անխուսափելի զուգակից բաբուջների մեջ: Նա փորձում էր նաև գյուղական սովորական տրեխները, որոնք մաշվում էին մյուսների հետ հավասար հաջողությամբ: Անընդհատ քայլելուց ուժաթափ՝ նա հազնում էր չուստեր, ինչպես գավառաքաղաքի ինտելիգենտ: Իսկ երբ արդեն կեսգիշեր էր դառնում, նա բակի խավարն ու անդորրը խախտում էր փայտե նալիկների համաչափ թխկթխկոցով:

Այդ ծանր աշխատանքից հետո հագիվ մի քանի ժամ քնելով, նա նորից էր վեր կենում՝ մաշելու բոլոր ժամանակների և բոլոր աշխարհների ոտնամանները:

Տարօրինակ էր, որ ոչ ոք չէր վրդովում Կարապետ աղայի հանգիստը: Միայն մի անգամ երկու մարդ թակեցին հյուրանոցի դուռը և հարցրին հյուրանոցատիրոջը.

— Քնած է,— հայտնեց Կարապետ աղան,— իսկ ես նրա օգնականն եմ: Ի՞նչ եք ուզում:

Անծանոթները գնացին: Նրանք ոչինչ չէին ուզում, նրանք հենց այնպես...

Ամեն ինչ կար հյուրանոցի բուֆետում՝ խնձոր, խաշած ձու, ձկան պահածոներ... Պահարանում շարված էին լիմոնադի շշեր, իսկ վաճառատեղանի տակ՝ մի փոքրիկ տակառ գինի:

Վաճառատեղանի վրա, երկարավուն պնակների մեջ, դրված էին մի քանի եփած հավեր: Դրանք արդեն մի քիչ հոտել էին, բայց դեռևս ուտելու համար պետք կգային: Ինչի՞ մասին կարող էր մտածել այլևս Կարապետ աղան: Կարելի էր սպասել բոլշևիկներին և այդ բոլորն ուտել...

Եվ նա սկսեց ուտել... Ուտել՝ արշալույսի հետ, ուտել՝ ցերեկվա շոգին, ուտել՝ վերջալույսի շողերի տակ: Ուտել՝ ինչ որ կպատահեր, լիներ դա բողկ, սարդինկա, սառած փլավ, կանաչի... Ուտում էր՝ այդ ամենը բոլշևիկների ձեռքից փրկելու հաստատ գիտակցությամբ: Ուտում էր և սրարշավ վազում արտաքնոց: Հետո գայիս էր և վերականգնված ուժերով շարունակում ուտել...

Երբ նրա ստամոքսում դիզվում էր խժռված նպարեղենի բավական հաստ մի շերտ, Կարապետ աղան դա ցողում էր ձեռքն ընկած հեղուկով՝ օդի, բենեդիկտին, գարեջուր կամ պարզապես քացախ: Կատարելով այդ ոռոգումը, նա սկսում էր բուֆետային կոնզյուկերատի մի նոր շերտով պնդացնել իր փորը: Այսպես, շերտ առ շերտ, դիզվում էին նրա ստամոքսում պինդ ու հեղուկ մարմինները, մինչև որ կերակրափողի բլիկոցը նախագգուշացնող ազդանշան էր տալիս հնարավոր կատաստրոֆի մասին:

Եվ միայն այդ թոպեներին, երբ արդեն կշտանում էր Կարապետ աղան, նրա ուղեղն ստանում էր մտածելու ընդունակություն: Ուտելու խելահեղ փափագից հագեցած, նա անդրադառնում էր իր ողբերգական վիճակին: Նա հուսահատությունից մազերն էր պոկում, որ ահա ինքն անզոր-անօգնական ընկել է այս օտար քաղաքը՝ առանց գիտենալու, թե ինչ պիտի լինի վաղը:

Նրա ականջները նույնպես կարծես բացվում էին միայն կշտանալուց հետո: Նա միայն այդ թոպեներին էր լսում, թե ինչպես հեռվում խուլ որոտում էին թնդանոթները: Ռ՞վ օտար քաղաքի օտար հյուրանոցում մենակ մնացածի աստված, ո՞ր կողմը պիտի հաղթի արդյոք:

Հոսսահատության և թնդանոթաձգության ձայները խլացնելու համար նա ձեռքը երկարում էր դեպի խմիչքներից որևէ մեկը և փորձում էր խմել: Այդպիսի դեպքերում նրա ստամոքսը սովորաբար հրաժարվում էր որևէ նոր բան ներս ընդունելուց: Սակայն եթե ընդունում էլ էր, Կարապետ աղան չէր կարողանում հարբել՝ ինքնամոռացության աստիճան...

Նա համարյա բոլորովին դուրս չէր գնում հյուրանոցից: Ինչո՞ւ գնար: Ճողոպրելու հույսից նա ձեռք էր քաշել: Կարիք անգամ չկար կայարան այցելելու: Գուցե նրան հետաքրքրեր դեպքերի ընթացքը, հետաքրքրեին նոր լուրերը: Բայց ոչ, Կարապետ աղան այդպիսի մարդ չէր: Նա հենց սկզբից գիտեր, որ նոր ոչինչ չի լսի: Ինչ էլ որ լսելու լինի, դարձյալ նույն եզրակացությունը պիտի հանի, որ աշխարհն իրար է խառնվել: Էլ ի՞նչ կարիք կար նույն բանն իմանալու համար անհանգստանալ և հեռանալ սննդարար հյուրանոցից:

Մի անգամ, սակայն, նա դուրս ելավ կես ժամով և շրջեց քաղաքը: Մի քանի շենքերի վրա նա տեսավ կարմիր դրոշակներ: Բոլոր մարդիկ քայլում էին՝ ականջները լարած դեպի թնդանոթաձգության խուճայները: Ինչ-որ տեղում ինչ-որ մարդիկ կռվում էին ինչ-որ մարդկանց դեմ՝ ինչ-որ նպատակով: Կարապետ աղան բավարարվեց այդքանով որ վերադարձավ իր ուտելավայրը:

Փողոցներով շրջում էին քաղաքացիական պիկետներ: Հենց Կարապետ աղայի աչքերի առաջ նրանք ձերբակալեցին մի քանի մարդկանց, որոնք փորձում էին թալանել մի փակ խանութ: Կարապետ աղան հանգիստ շունչ քաշեց. դեպքերի խառնիճաղանջի միջից նա միայն մի բան էր պարզ կռահում՝ նախկին տերերը փախել են, բայց քաղաքում խորհրդային իշխանությունը դեռ չի ամրացել: Այդ կախված է նրանից, թե ում օգտին կլուծվի հեռու թնդանոթաձգությունը:

Ցերերի կատաղությամբ Կարապետ աղան պաշտպանում էր հյուրանոցի դռները: Քանի դեռ դրա բուժետունում կա մի սկուտեղ՝ խնձորով լի, կամ մի տուփ սարդիկակա, Կարապետ աղան ոչ ոքի թույլ չի տա մտնել այդտեղ: Ես եմ հյուրանոցի տերը, ի՞նչ եք ուզում: Բոլոր համարներն զբաղված են...

Եվ նորից Կարապետ աղան հարձակվում էր բուժետոի վրա և սկսում էր ուտել: Քանի՞ հավ իր վախճանը գտավ նրա ստամոքսում, քանի՞ տեսակ խմիչք նրա կոկորդի նեղուցով հոսեց դեպի վար...

Եթե չլինեին այդ ուտելիքները՝ նա հազիվ թե ուժ ունենար օրական տասը-տասներկու ժամ շրջել դատարկ փակ բակում և մաշել կոշիկները: Բայց, մյուս կողմից, եթե չլինեին այդ կոշիկները և դրանք մաշելու համար ձեռնարկած նրա անվերջանալի շրջագայությունները, Կարապետ աղան հազիվ թե մարսեր այդքան ճոխ բուժետոը, որը նա մաս առ մաս տեղափոխում էր իր ստամոքսը: Հյուրանոցի բուժետուն ու թատրոնական կոշիկները փոխադարձաբար օժանդակում էին իրար և լրացնում: Կարապետ աղան լիովին օգտվում էր երկուսից էլ՝ դրանք բոլբուլներից ազատելու վեհ նպատակով:

Ահա իրերն այս վիճակի մեջ էին, երբ երկու օր հետո բոլբուլները մտան քաղաք և նրանց շտաբը եկավ տեղավորվելու այդ հյուրանոցում:

3

Քիչ մնաց Կարապետ աղային հանձնելն դատի՝ թատրոնի ռեկվիզիտը հափշտակելու համար: Նրան հազիվ հաջողվեց ապացուցել, որ այդ բոլորը նա գնել է մի ուրիշից, որը, իհարկե, փախել էր քաղաքից: Իր սեփական մեջքի վրա բարձած, նա կոշիկներով լի պարկերը մեկ առ մեկ տարավ թատրոն և դրեց իր տեղը: Չորրորդ պարկը տանելուց հետո նա այլևս չվերադարձավ հյուրանոց, այլ գնաց ուղիղ կայարան: Հազիվ տեղ գտնելով մի ապրանքատար վագոնում, նա վերադարձավ ետ՝ տուն, իր հետ տանելով միայն մի մաշված ոտնաման՝ իր դեմքը...